ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_ ապրիլի 2019 թվականի N - Լ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-071-26.03.2019-ՊԻ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկություններին,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. ապրիլի

Երևան

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-071-26.03.2019-ՊԻ-011/0*)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հարկ է համարում նշել, որ նախագծից պարզ չէ, թե ովքեր են լինելու օրենքի շահառուները, այլ կերպ ասած՝ ովքեր են համարվում մարտական հերթապահություն իրականացնող զինվորական ծառայողներ, ինչ հիմնավորող փաստաթղթերի հիման վրա է հարկադիր կատարողը որոշելու պարտապան զինծառայողը մարտական հերթապահություն իրականացնող անձ է, թէ ոչ: Ավելին, հարց է ծագում, թե արդյոք մարտական հերթապահությունը տվյալ զինծառայողի համար մշտական կանոնակարգված աշխատանք է, թե վերջինս կարող է ամսվա մեջ մի քանի օր կամ շաբաթ իրականացնել մարտական հերթապահություն, իսկ մնացած ժամանակ որպես զինծառայող իրականացնել իր այլ պարտականությունները: Նշված դեպքերում, հարց է ծագում, թե ինչ չափով է բռնագանձում տարածվելու զինծառայողի աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ վճարների վրա:

Անհրաժեշտ ենք համարում նաև վերանայել պահման շեմը՝ այն 10 տոկոսի փախարեն առաջարկում ենք սահմանել 30 տոկոս:

Միաժամանակ, հաշվի առնելով գործող օրենքի 58-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, առաջարկում ենք լրացում կատարել 58-րդ հոդվածի 1-ին մասում՝ մասը լրացնելով նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահությանը ներգրավված զինծառայող պարտապանի աշխատավարձից և դրան հավասարեցված վճարներից կարող է կատարողական թերթի կատարման ընթացքում պահվել երեսուն տոկոսից ոչ ավելի՝ մինչև բռնագանձվող գումարի լրիվ մարումը՝ մարտական հերթապահություն իրականացնող զորամասի կողմից եռամսյակը մեկ անգամ տրվող տեղեկանքի հիման վրա:»:

Նախագծում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթ, համաձայն որի՝ օրենքի դրույթները տարածվելու են սույն օրենքի ընդունումից առաջ հարուցված և ավարտված կատարողական վարույթների վրա՝ դրանց չափերը օրենքի նախագծով սահմանված չափին համապատասխանեցնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է կատարողական թերթի կատարման ընթացքում առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորական ծառայության մեջ գտնվող պարտապանի աշխատավարձից և դրան հավասարեցված վճարներից կատարել պահում տասը տոկոսից ոչ ավելի՝ մինչև բռնագանձվող գումարի լրիվ մարումը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ նշված նախագծի ընդունումը չի հանգեցնի ՀՀ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փաշինյան,

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-71-26.03.2019-ՊԻ-011/0):

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2019թ. մարտի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

26 մարտի 2019թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-071-26.03.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 58-րդ հոդվածը լրացնել նոր 3.2. մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Կատարողական թերթի կատարման ընթացքում առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորական ծառայության մեջ գտնվող պարտապանի աշխատավարձից եւ դրան հավասարացված վճարներից կարող է պահվել տասը տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ բռնագանձվող գումարի լրիվ մարումը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

- **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Նախագծի ընդունման անհարժեշտությունը պայմանավորված է առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորական ծառայողների սոցիալական երաշխիքների նախատեսման անհրաժեշտությամբ:

- **Առաջարկվող կարգավորումը**

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ կատարողական թերթի կատարման ընթացքում առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորական ծառայող պարտապանի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարներից կարող է պահվել տասը տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ բռնագանձվող գումարի լրիվ մարումը:

- **Ակնկալվող արդյունքները**

Նախագծի ընդունման արդյունքում օրենքով կսահմանվեն առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող անձանց սոցիալական երաշխիքների իրացումը:

Տեղեկանք

Գործող օրենքում առաջարկվող լրացման մասին

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հոդված 58. Պարտապանի աշխատավարձից եւ այլ տեսակի եկամուտներից կատարվող պահումների չափը

1. Կատարողական թերթի (թերթերի) կատարման ընթացքում պարտապանի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարներից կարող է պահվել հիսուն տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ բռնագանձվող գումարների լրիվ մարումը:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված պահումների չափի սահմանափակումը չի կիրառվում, եթե՝

1) բռնագանձվում է ալիմենտ.

2) հատուցվում է առողջությանը, ինչպես նաեւ կերակրողի մահվամբ պատճառված վնասը.

3) հատուցվում է հանցագործությամբ պատճառված վնասը:

Այդ դեպքերում պահումների չափը չի կարող գերազանցել աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարների յոթանասունհինգ տոկոսը:

3. Սույն հոդվածով սահմանված կանոնները կիրառվում են նաեւ պարտապանի, կուտակային եւ կամավոր կուտակային կենսաթոշակների, կրթաթոշակի եւ մտավոր սեփականության օբյեկտների օգտագործմամբ ստացված վարձատրությունների վրա բռնագանձում տարածելիս:

3.1. Կատարողական թերթի կատարման ընթացքում պարտապանի պետական կենսաթոշակից կարող է պահվել երեսուն տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ բռնագանձվող գումարների լրիվ մարումը:

3.2. *Կատարողական թերթի կատարման ընթացքում առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորական ծառայող պարտապանի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարներից կարող է պահվել տասը տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ բռնագանձվող գումարի լրիվ մարումը:*